ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«12» հոկտեմբերի 2022 թվականի N: 533-Ա ք.Գյումրի

ՄԱՐԻԱՄ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 160-րդ, 163-րդ հոդվածների, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-Ն որոշման 6-րդ կետի, նույն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրության 69-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշման հավելվածի 1-ին կետի դրույթներով և հիմք ընդունելով Մարիամ Առաքելյանի 2022 թվականի հոկտեմբերի 10-ի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու N 28 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Մարիամ Առաքելյանին տրամադրել ամենամյա երկարացված արձակուրդի մասը՝ 15 աշխատանքային օր՝ 2022 թվականի հոկտեմբերի 17-ից մինչև նոյեմբերի 4-ը ներառյալ:

2. Մարիամ Առաքելյանի արձակուրդում գտնվելու ընթացքում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու N 28 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնակատար նշանակել նույն կազմակերպության տնօրենի ուսումնական աշխատանքի գծով տեղակալ Էլլա Հովհաննիսյանին:

Ն.ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է